ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

9 դեկտեմբերի 2019թ. թիվ 723

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) Լոռու մարզային վարչության հետ համատեղ կազմված աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 09.12.2019թ. թիվ 01/15.2/22647-19 հանձնարարականը՝

Կ ա ր գ ա դ ր ո ւ մ եմ.

1. Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2020թ. հունվարի 1-18-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով իրականացնելու համար Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարներին առաջարկել՝

Մինչև ս/թ դեկտեմբերի 27-ը կազմել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովներ՝ դրանց կազմում ընդգրկելով նաև տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին:

Անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2020թ. հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն և ՀՀ վիճակագրական կոմիտեի Լոռու մարզային վարչություն:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող Ա. Շահվերդյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 9
ք. Վանաձոր